

Արմավիրի մարզպետարան  
Առողջապահության և սոցիալական  
ապահովության վարչության պետ՝  
Հովհաննես Հարությունյանին  
«Իրավունքի զարգացման կենտրոն» ՀԿ  
Նախագահ Վլադետա Զովունյանից

ք. Երևան

*Մկրտչ 42-17*

ՀԱՐՑՈՒՄ

*(տեղեկություն ստանալու վերաբերյալ)*

Հարգելի՛ պարոն Հարությունյան

«Իրավունքի զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից 22.03.2017թ-ին «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի բժշկական կենտրոն» (այսուհետ՝ Բժշկական կենտրոն) ՓԲԸ-ին հասցեագրված՝ էլեկտրոնային առողջապահության համակարգի ներդրման վերաբերյալ հարցմանն ի պատասխան, բժշկական կենտրոնը իր 13.04.2017 N 08-238/352 գրությամբ հայտնել է, որ էլեկտրոնային առողջապահության ներդրման հետ կապված աշխատանքների մասին տեղեկատվություն կարող ենք ստանալ ՀՀ Արմավիրի մարզպետարանից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ խնդրում ենք պատասխանել հարցմանը:

«Իրավունքի զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպությունը 2015թ-ի նոյեմբերից իրականացնում է «Օգնության գիծ» ծրագիրը, որի շրջանակներում հասարակության տարբեր խմբերին մատուցում է անվճար հեռախոսային և առցանց իրավաբանական խորհրդատվություն առողջապահական իրավունքի ոլորտում, ինչպես նաև իրականացնում է ուսումնասիրություններ առողջապահության ոլորտում բժիշկների և պացիենտների իրավունքների և այլ իրավակարգավորումների վերաբերյալ:

«Օգնության գիծ» ծրագրի մաս է կազմում նաև պացիենտի գաղտնիության իրավունքի վերաբերյալ հետազոտությունը, որի շրջանակներում ուսումնասիրվում են նաև ՀՀ-ում էլեկտրոնային առողջապահության ներդրմանն ուղղված կարգավորումները և դրա հետ կապված իրավահարաբերությունները: Համակարգի ներդրումն իրենից ենթադրում է ՀՀ առողջապահության ոլորտում միասնական էլեկտրոնային տեղեկատվական համակարգի ստեղծում, որը պետք է ապահովի հասարակության յուրաքանչյուր անդամի վերաբերյալ բժշկական տեղեկատվության հավաքագրումը, արխիվացումը և օգտագործումն առողջապահության ոլորտի մասնագետների կողմից՝ էլեկտրոնային միջավայրում: Համակարգի ներդրման արդյունքում ապահովվելու է հանրապետության յուրաքանչյուր բնակչի վերաբերյալ լիարժեք բժշկական տեղեկատվություն՝ միասնական և ամբողջական

ՀՀ ԱՐՄՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ  
Մոտից թիվ 094/7661-17  
26 05 2017

ձևաչափով: Համակարգի միջոցով հավաքագրված էլեկտրոնային տեղեկատվության կիրառման նպատակները կարող են լինել տարբեր, մասնավորապես՝ անձի վերաբերյալ բժշկական մանրակրկիտ տեղեկատվության ձեռք բերում և համապատասխան բժշկական ծառայությունների մատուցում, բժշկական ծառայությունների դիմաց փոխհատուցումների իրականացում, ուսումնասիրություններ, վերլուծություններ և այլն:

Համակարգի ներդրմամբ բժշկական օգնություն և սպասարկում ստացող անձանց վերաբերյալ բժշկական ցանկացած տեղեկատվություն մուտքագրվելու է միասնական տեղեկատվական շտեմարան՝ բժշկական հաստատության համապատասխան մասնագետի կողմից, ինչը բացառելու է թղթային տեղեկատվության պահպանումը և հետագա արխիվացումը:

Համակարգում ներառվող տեղեկատվությունը լինելու է անձնավորված, ընդ որում անձի նույնականացումն իրականացվելու է էլեկտրոնային նույնականացման քարտերի միջոցով, տեղեկատվությունը ցանկացած պահի հասանելի է լինելու համակարգի բոլոր իրավասու մասնակիցներին, տեղեկատվությունը լինելու է գաղտնի և պաշտպանված:

Նախատեսվում է էլեկտրոնային առողջապահության համակարգի ներդրումը ՀՀ-ում իրականացնել 3 փուլով՝

1-ին փուլ՝ բուժհաստատությունները միանում են համակարգին և մուտքագրում իրենց տեխնիկական և մարդկային ռեսուրսների, մատուցվող ծառայությունների մասին տվյալներ:

2-րդ փուլ՝ պացիենտների հոսքի կառավարում՝ հերթ կանգնելու փոխարեն օնլայն ռեժիմով հերթագրում: Այս փուլում ոչ մի առողջապահական տվյալ չի մուտքագրվում:

3-րդ փուլ՝ էլեկտրոնային բժշկական քարտի (ԷԲՔ) բացում: Բժիշկները կսկսեն մուտքագրել պացիենտի տվյալները: Անցումային ժամանակահատվածում բժիշկները գուզահեռ թղթային տարբերակով էլ կգրանցեն, մինչև բոլոր բուժաշխատողները վերապատրաստվեն և անցնեն էլ. համակարգի կիրառմանը:

Ինչպես գիտենք ծրագրի ստեղծման տեխնիկական աշխատանքներն ավարտելուց հետո 2015թ. հոկտեմբերից Երևանում և ՀՀ մարզերում գործող 5 բուժհաստատություններում իրականացվել է համակարգի պիլոտային փորձարկում: Դրանում ներառվել են «Հերացի» և «Մուրացան» հիվանդանոցային համալիրները, Գորիսի բժշկական կենտրոնը, Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկան, Բալսհովիտի բժշկական ամբուլատորիան, «Աբովյան» բժշկական կենտրոնը և «ԻՆԳՈ-Արմենիա» ապահովագրական ընկերությունը:

Փորձարկման նպատակով իրականացվել է ավելի քան 60 բուժաշխատողի ուսուցում: Ծրագրով իրական ժամանակում սպասարկել են ավելի քան 100 պացիենտի:<sup>1</sup>

Հասկանալու համար ներդրվող համակարգի արդյունավետությունը, բացահայտելու համար դրա արդյունքում հնարավոր խոչընդոտները բուժաշխատողների և բուժհաստատության կանոնավոր աշխատանքին, ինչպես նաև խնդրի բազմակողմանի և համապարփակ ուսումնասիրության անհրաժեշտությունից ելնելով՝ «Իրավունքի զարգացման

<sup>1</sup> <https://goo.gl/TIf7TF>

կենտրոն» ՀԿ-ն հարցումներ է իրականացնում ինչպես պացիենտների այնպես էլ բուժաշխատողների և բժշկական հաստատությունների շրջանում:

Այսպիսով, հաշվի առնելով սպասվող փոփոխությունները և հիմնվելով ՀՀ Մահմանադրության 51-րդ հոդվածի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի վրա՝ խնդրում եմ ինձ տրամադրել տեղեկատվություն հետևյալ հարցերի շուրջ՝

- Բժշկական կենտրոնում ձեռնարկվել է արդյոք որևէ միջոցներ կամ գործողություններ, որոնք ուղղված են էլ. առողջապահության համակարգի ներդրմանը: Եթե այո, խնդրում ենք նշել, թե էլ. համակարգի ներդրման աշխատանքները ո՞ր փուլում են գտնվում:
- Ունի՞ արդյոք Բժշկական կենտրոնը համապատասխան տեխնիկական հագեցվածություն՝ հատուկ սարքավորումներ, համակարգիչներ:
- Անձնակազմն ունի՞ արդյոք համապատասխան գիտելիքներ համակարգչով աշխատելու համար:
- Էլ. առողջապահության նոր համակարգի և դրանից օգտվելու կարգի վերաբերյալ բժշկական անձնակազմի համար կազմվերպվել է արդյոք դասընթացներ:
- Նոր համակարգի կիրառումը կհեշտացնի՞ արդյոք անձնակազմի աշխատանքը, թե կդժվարեցնի: Ինչպե՞ս:
- Ինչպե՞ս եք պատկերացնում թղթային տվյալների մուտքագրումը էլեկտրոնային բազա: Ունե՞ք համապատասխան մարդկային ռեսուրսներ նշված աշխատանքի իրականացման համար:
- Համակարգի ներդրման հետ կապված ի՞նչ խնդիրներ եք տեսնում գաղտնիության իրավունքի պահպանման տեսանկյունից:

Խնդրում ենք վերը նշված հարցերի պատասխաններն ուղարկել [medlaw.info@gmail.com](mailto:medlaw.info@gmail.com) էլ. հասցեին կամ պատասխան նամակով:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30-օրյա ժամկետ): Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում ենք գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող եք ուղղել հարցումը:

Կանխավ շնորհակալություն՝

«Իրավունքի զարգացման կենտրոն» ՀԿ-ի նախագահ  
Վիոլետա Զովունյան

23, մայիսի, 2017թ.

